Չարենցավան համայնքի ղեկավար՝
պ-ն Հ. Շահգալդյանին,
Չարենցավան համայնքի ավագանուն

Դիմում

Մեծարգո՛ պ-ն համայնքապետ,մեծարգո՛ ավագանու անդամներ,նախաձեռնող խմբի անունից ձեզ են դիմում Չարենցավանի տարածքի դպրոցների զինղեկները:
Մեր կողմից նախաձեռնություն է ցուցաբերվել Չարենցավան համայնքում արվեստի դպրոցում, ստեղծել մասնագիտացված ռազմա-հայրենասիրական պատանեկական խմբակ՝ համայնքի պատանիների շրջանում առողջ, ռազմա-մարզական, կամային հատկանիշներով օժտված, հայրենասեր սերունդ դաստիարակելու համար:
Այսօր դպրոցական չափորոշիչներով ՆԶՊ առարկան դասավանդվում է շաբաթական մեկ դասաժամով, որը բավարար չէ լիարժեք և համապարփակ գիտելիքներ և ռազմա-հայրենասիրական դաստիարակություն տալու համար:
Գաղտնիք չէ՛,որ այսօր, առավել քան,երբևէ, ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով, հայրենիքի պաշտպանությանը լիարժեք պատրաստ լինելը օրվա հրամայականն է: Կարծում ենք, որ մեր նախաձեռնությունը խթան կհանդիսանա համայնքի պատանիների շրջանում ռազմա-հայրենասիրական և ռազմա-մարզական կրթություն ստանալու և, ապագայում ռազմա-մասնագիտական կողմնորոշում ունենալու համար: Հավաստիացնում ենք, որ ունենք բոլոր նախադրյալները՝ հանրապետությունում գործող նմանատիպ կառույցներից ո՛չ պակաս, փորձ ու հմտություն հաղորդելու մատաղ սերնդին: Հաջորդիվ՝ կներկայացնենք մշակված ծավալն ու ծրագիրը:
Ուստի, խնդրում ենք ձեզ՝ մեր առաջարկը քննարկելու և ընդառաջելու համար:
Կանխավ՝ շնորհակալություն:

Նախաձեռնող խմբի անունից՝ Գ. Նազարյան

Լ. Թորոսյան

Ս. Հարությունյան

Զ. Մարգարյան

Մ. Պողոսյան

Հ. Սաֆարյան

Ս. Աֆյան

Ա. Հունանյան

Ա. Հայրապետյան

Ս. Սարգսյան

Ա. Գրիգորյան

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «05» 04 2022 թ.
Մտից N 1407 Գործ N 04